ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ 1947, № 1 *Общественные науки*

ԱՍ. ԼԻՍԻՑՅԱՆ

ԿԻՄՄԵՐԱԿԱՆ ՆԵՐԱՐՇԱՎԻ ՈՒՂԻՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍ

Գիտության մեջ գրեթե ոչ մի վեճ չի առաջացնում այն խնդիրը, թե սկյութացիք հյուսիսից հարավ որ կողմով են անցել Մեծ Կովկաս։ Այդ ուղին ցույց է տրվում Կասպից ծովի արևմտյան եզրով, այն հարթ վայրերով, որտեղով այժմ Դերբենդի վրայով անցնում է երկաթգիծը Մախաչկալայից Իալթարի—Իաքու, հնում՝ Կասպից դռնով, կամ Ճորա պարակով։ Սկյութացիք մտել են Մեդացոց երկիրը, այնտեղից թափանցել Միագետք, հասել մինչև Եգիպտոս և ապա քաշվել դեպի հյուսիս, դեպի Տավրոս և անցել կրկին Մեդացոց աշխարհը։ Նրանց մի մասը նահանջել է կրկին Մեծ Կովկասից հյուսիս, մյուսը մնացել է հարավ-կովկասյան երկրներում։ Հայ ժողովրդի գոյացման պրոցեսում նրանք այն մեծ դերը չեն խաղացել, ինչ խաղացել են կիմմերները։ Ահա կիմմերների ներարշավի ուղին է, որ առանձնապես կարևոր է Հայկական լեռնաշխարհում տեղի ունեցած էթնիկական փոփոխության բնույթը հասկանալու համար։ Այս խնդրի շուրջն է, որ հետազոտողների եզրակացությունները խիստ տարամիտում են։ Այս հարցը քննության է առնում ակադ. Հ. Մանանդյանն իր այն զեկույցի մեջ, որ կարդացել է Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Հնդհանուր ժողովում 1944 թվի ապրիլի 11-ին և ապա լույս ընծայել առանձին գրքով՝ «Հին Հայաստանի և Անդրկովկասի մի քանի պրոբլեմների մասին» վերնագրի տակ։ Այս զեկույցի մեջ առաջին գլուխը նվիրված է հենց այդ կիմմերական ուղու գծմանը, որի հետ շաղկապվում են հաջորդ գլուխների եզրակացությունները։

Ակադ. Հ. Մանանդյանը բերում է անգլիացի գիտնական Մինսի կարծիքը, որը „Cambridge Ancient History“ աշխատության երրորդ հատորում կրկնում է եվրոպական այլ պատմագետների աշխատություններում ընդունված կարծիքը։ Թե կիմմերները մտել են Անդրկովկաս «Դարիալի կիրճով»։ Նույն ճանապարհը Մինսից ավելի առաջ (1921 թ.) գծում է հատկապես կիմմերներին նվիրած իր հոդվածում ուրարտական պատմությամբ մասնագիտորեն զբաղված (այժմ հանգուցյալ) C. F. Lehmann-Haupt-ը Pauly-Wissowa-ի խմբագրությամբ լույս տեսնող „Real Enzyklopadie der classischen Wissenschaft“ հանրագիտարանի XXI կիսահատորյակում,[2] *որտեղ, բացի Թերեքի և Արաղվայի ակունքներով անցնող լեռնանցքից, գծվում է նաև Լիախվա գետի ակունքների մոտով անցնող լեռնանցքը և ճանապարհի շարունակությունը նշվում է Գորիով և Թբիլիսիով դեպի Ազսաևի գետահովիտը և այստեղից բարձրացվում Հայկական լեռնաշխարհը, մինչդեռ սկյութական ցեղերի ներխուժման համար ճանա-*

[1] *Տես՝ Լեո—«Հայոց պատմություն», հ. I. Թիֆլիս, 1917, էջ 309.*
[2] Stuttgart, 1921, XXI Halbb. S. 397—434.

ճանապարհը ցույց է տրվում Կասպից ծովի ափով։ Կիմմերների՝ Կովկասը ճեղքող կիրճերով հարավ փոխադրվելու ուղին ոչ մի կերպ չի կարող ընդունելի համարվել։ Դրա դեմ գլխավոր առարկությունն այն է, որ, ըստ Հերոդոտի բերած երկու պատմությունների, կիմմերները ներխուժել են կամ ծովի ափով, կամ ոչ կիրճի բնույթ, երկու կողմից լեռներ ունեցող ճանապարհով, որովհետև այդ ճանապարհը միայն մի կողմից, աջից ունեցել է լեռներ, ասել է թե՝ մյուս կողմից նա ժայռոտ չի եղել։ Այդպիսի ճանապարհը կարող էր լինել միայն Մեծ Կովկասի հյուսիսային կամ ներքին ծովյան ստորոտներով։

Եթե կիմմերների ներարշավի ուղին չէր ճեղքում Մեծ Կովկասյան շղթան, այլ անցնում էր նրա կողքով, ապա որ կողմով էր նա շրջում շղթան—արևելքից՝ Ճորա պահակով, Կասպից ծովի եզրով, թե՞ արևմուտքից՝ Սև ծովի ափով։

Այս հարցին պատասխանելու համար ակադ. Հ. Մանանդյանը ընթերցության է ենթարկում, Հերոդոտի և Ստրաբոնի վկայություններից բացի, նաև Ասորեստանի մի բևեռագիր աղյուսակ։ Ես այստեղ կդիմեմ, բացի այդ աղբյուրներից, նաև ասորեստանյան այլ բևեռագիրներին, նույնպես և հնագիտական, աղգագրական և աշխարհագրական տվյալներին։

Հերոդոտն առաջին գլխում (I, 103) ասում է, որ «Սկյութացիք ներխուժեցին Ասիա՝ դուրս վտարելով կիմմերներին Եվրոպայից և հալածելով նրանց, մինչդեռ նրանք փախչում էին, և այսպիսով եկան Մեդացոց աշխարհը։ Մեոտիդյան լճից (Ազովյան ծովից) մինչև Փասիս գետը և Կոլխերի երկիրը ոտով լավ գնացողի համար 30 օրվա ճանապարհ է, իսկ Կոլխերի երկրից հեռու չէ Մեդական աշխարհն անցնելը—այս երկրների միջև կա միայն մի ժողովուրդ, սասպեյրներ.—սրանց միջով անցնելով կլինես Մեդական աշխարհում։ Սկյութացիք, սակայն, ներխուժեցին ոչ այս ճանապարհով, այլ (նրանից) շեղվելով՝ (գնացին) վերևով անցնող, շատ ավելի երկար ճանապարհով՝ ունենալով իրենց աջ թևում Կովկասյան լեռները»։

Ըստ այս վկայության՝ սկյութացիք ընթացել են Մեծ Կովկասի հյուսիսային ստորոտով և ապա շրջել են շղթան Կասպից ծովի ափով, այլ կերպ լեռները չէին լինի միշտ նրանց աջ թևում։ Այսպես նրանք հասել են Մեդացոց աշխարհը, հետապնդելով կիմմերներին մինչև այդտեղ, «շեղվելով[1] կարճ ճանապարհից»։ Երկուսն էլ ուրեմն միասին մտել են Մեդացոց աշխարհը։

Հերոդոտի մյուս վկայությունը (IV, 12) ոչ թե տարբերվում է այս առաջինից, այլ նրանից բխելով՝ նրան լրացնում է։ Այստեղ մեկ-մեկ մեջ բերելով, թե որտեղ են կիմմերները թողել իրենց ներկայության հետքերը ըստ պահպանված տեղանունների, նա փորձում է բացատրել, թե ինչպես է եղել, որ կիմմերները բնակվել են այն թերակղզու վրա, որտեղ իր (Հերոդոտի) ժամանակ կառուցված էր հունական Սինոպ քաղաքը, և «հավանական» է գտնում, որ այդ տեղի է ունեցել դեռ այն ժամանակ, երբ կիմմերները փախչելիս են եղել սկյութացիներից հետապնդվելով։ Պարզ է, որ սկյութացիները նրանց հալածելով և Մեդացոց երկիրը մտնելիս՝ մոլոր-

[1] Ἐκτοπούμενοι պետք է թարգմանել «շեղվելով. մի կողմ ծովելով», և ոչ թե «մոլորվելով», ինչպես թարգմանում է ակադ. Հ. Մանանդյանը (էջ 7)։

վել էին ճանապարհից—αμαρτοντες της οδου, որովհետև կիմմերները շարունակ ծովի երկարությամբ էին փախչում, իսկ սկյութացիներն աջ թևում ունենալով Կովկասը, հետապնդում էին նրանց մինչև այնտեղ, որտեղից ներխուժեցին Մեդական երկիրը՝ շեղվելով (ծովելով) (հետապնդման) ճանապարհի կեսից—«ες μεσόγαιαν της Ασίας»։ Հերոդոտը շարունակում է. «սա մի այլ համատարած (ξυνος λόγος) բացատրություն է, որ պատմվում է հույների և բարբարոսների մեջ»։

Այսպիսով՝ այս երկրորդ վկայությունը ձգտում է բացատրել, թե ինչպես է, որ կիմմերները մտած լինելով սկյութացիների հետ Կովկասից հարավ մինչև մեդացոց սահմանները՝ այնուհետև երևացին Սինոպի թերակղզու վրա, և կրկնում է հույների ու բարբարոսների մեջ լսած բացատրությունը, որ սկյութացիները[1] հետապնդման կես ճանապարհիս «շեղվեցին», «ծռեցին»[1] դեպի Մեդացոց աշխարհի ներսը, իսկ կիմմերները (ուրեմն շարունակելով փախչել դեպի արևմուտք) մոտեցան Սև ծովին և նրա ափերով հասան Սինոպի թերակղզին։ Այս վկայությունն ապացույց է, որ կես ճանապարհից շեղվելը, երկու ժողովուրդների իրարից բաժանվելը տեղի է ունեցել Անդրկովկասի սահմաններում. ուրեմն կիմմերներն անցել են ամբողջ Անդրկովկասով արևելքից արևմուտք։

Ակադ. Հ. Մանանդյանը կիմմերական ներարշավի այս երկար (շուրջկովկասյան) ճանապարհի փոխարեն գծում է, հակառակ Հերոդոտի ցուցմունքի, «կարճ» ճանապարհը—Մեոտիս-Կողքիսյան ուղին Սև ծովի ափով։

Այս Մեոտիս-Կողքիսյան ճանապարհին նա հատկացնում է «ռազմական և առևտրական մեծ դեր հին ժամանակներում», որը, իր կարծիքով, անտեսել են պատմագետները՝ բռնազբոսիկ և անընդունելի լուսաբանություն տալով սկզբնաղբյուրների մի շարք վկայություններին» (էջ 6)։ Այս ճանապարհի առաջնակարգ նշանակությունը հին ժամանակներում «միանգամայն անվիճելի» համարելով (էջ 8), նա նշում է նրա հարավային մասը, Արտաշատից մինչև Ռիոն—Փասիս գետը, ըստ Պեվտինգերյան քարտեզի, հետևելով «Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները»[2] իր աշխատության մեջ տված լուսաբանությանը, իսկ հյուսիսային գիծը, Դիոսկուրիայից մինչև Մեոտիս լիճը, նա տանում է ըստ Ստրաբոնի։ Նա հիշատակում է, որ «կայարանները նշանակված են նաև 7-րդ (կամ 8-րդ) դարի հեղինակ Անանուն Ռավենացու աշխատության մեջ», բայց նրանց անունները մեջ չի բերում։ Ստրաբոնը (XI, 2, 14) Պանտիկապեոնից (Կերչից) մինչև Դիոսկուրիա տալիս է 7 կայարանների՝ Կորոկոնդանի, Սինդերի ծովափի, Բատայի, Կերկետների (չերքեզների) ծովափի, Աքայների ծովափի, Հենիոքների ծովափի և, վերջը, Դիոսկուրիայի միջև եղած հեռավորությունը։ Տարածությունների ընդհանուր գումարն անում է 3360 ստադիոն։ Բերելով Ստրաբոնի այս վկայությունը, ակադ. Հ. Մանանդյանը բաց է թողնում մի չափազանց կարևոր մանրամասնություն, որը կարդում ենք այս կայանների անուններից մի քիչ վեր նույն հեղինակի (XI, 2, 13) գրքի հատվածում։ Այս վկայությունից երևում է, թե որչափ այդ «կարճ»

[1] 'ες μεσόγαιαν της οδοῦ τραφθεντες. այս անգամ էլ նույն τρέπω (տրեպո) բայն է. որը դիտի թարգմանել «ծռել», «շեղվել», ոչ թե «մոլորվել»։

[2] Երևան, 1936 թ., էջ 117—135։

ճանապարհը եղել է միաժամանակ և «հարմար» (էջ 8)։ Այդ մանրամասնությունից իմանում ենք, որ՝ 1. Սինդիկայից (Թամանյան թերակղզուց) սկսած ծովափը, որտեղ բնակվում են աքայները, դյուգերը և հենիոքները, «զուրկ է նավահանգիստներից և լեռնոտ է». 2. այդ պատճառով նշված կայարաններով անցնում է ոչ թե ցամաքային, այլ «ծովային» πλοῦς ճանապարհը (XI, 2, 14) և որ երբ Միհրդատ Եվպատորը փախչում էր Կողքիսից Բոսփոր, «եթե հենիոքների երկրով ճանապարհը նրա համար անցանելի էր», նրանցից հյուսիս դյուգերի երկրով նա «հրաժարվեց անցնել ճանապարհի դժվարությունների և դաժանության» պատճառով և մեծ խոչընդոտների հանդիպելով գնում էր ծովափի ուղղությամբ, հաճախակի փոխադրվելով ծովի վրա, այսինքն՝ նավերի վրա, մինչև՝ որ հասավ աքայների երկիրը։

Ակադ. Հ. Մանանդյանի աչքից վրիպել է նույն Ստրաբոնի գրքի նաև վերջին գլխում (XVII, 3, 24) բերված այն տեղեկությունը, որ հոռոմայեցիք տիրել են աշխարհի լավագույն և ընդարձակ երկրներին. իրենց հզորության շնորհիվ հպատակեցրել են նաև «Ասիայի ամբողջ—դեպի մեզ (Ստրաբոնը ամասիացի. փոքրասիացի էր) դարձած ծովափը, եթե հաշվի առնելու չլինենք աքայների, դյուղերի և հենիոքների երկրները, որտեղ անպտուղ ձորերի մեջ ապրում են ավազակաբարո և քոչվոր ժողովուրդները» («անպտուղ» ասելով պետք է հասկանալ հողագործության համար անհարմար)։ Այսպես ուրեմն, այս ձորերում կիմմերների՝ Մեոտիդյան լճի մոտերքից Ասիա փախչելուց գրեթե 6—7 դար անց, երբ Սև ծովի ափերին հիմնված հունական գաղութներն ապրում էին ծաղկյալ տնտեսական և կուլտուրական կյանքով, հոռոմայեցիք տակավին չէին կարողացել իրենց իշխանությանը ենթարկել այդ ճանապարհին ապրող ազգությունները՝ ձորերի անմատչելիության պատճառով։

Ինչպես վերը նշեցի, ակադ. Հ. Մանանդյանը չի նկատել այն ներքին կապը, որ կա Հերոդոտի երկու հատվածներում պատմածների միջև։ Թվում է, թե այդ վկայությունները որպես տարբերիմաստ հասկանալով՝ նաև պրոֆ. Բ. Բ. Պիոտրովսկին կիմմերական և սկյութական արշավանքների ճանապարհներն իրարից առանձնացնում է՝ հետևելով Հերոդոտի ավանդած երկրորդ պատմությանը։ Այսպես պիտի կարծել նրա վերջին հետազոտության[1] հետևյալ խոսքերից. «Կիմմերները երևացին 8-րդ դարում Անդրկովկասի արևմտյան մասում և թափանցեցին արևելյան Կապադովկիա, որտեղ ըստ երևույթին գտնվում էր Ասորեստանի բնագիրների մեջ հիշատակվող Գամիրը երկիրը», իսկ «սկյութացիք, կիմմերներին հակառակ, մեզ հայտնի են արևելյան Անդրկովկասում» (էջ 304)։ «Ասորեստանյան բնագիրներից մեզ հայտնի է, որ 7-րդ դարի առաջին կեսում սկյութացիք երևացին Մանա երկրում, Ուրմիո լճի հարավում։ Ըստ երևույթին նրանք այնտեղ եկան շրջելով ծովն արևելքից, ուռանց ուրարտացիների հետ ընդհարվելու» (էջ 306)։ Ասել է՝ պրոֆ. Բ. Բ. Պիոտրովսկին զանազանում է արևմտյան՝ կիմմերական, Սև ծովի ափով և արևելյան՝ սկյութական, Կասպից ծովի ափով ճանապարհները։ Այսպիսով, նա էլ չի նկատում Հերոդոտի երկրորդ հատվածի տրամաբանական կապը առաջինի հետ և աչքից բաց է թողնում Հե-

[1] Б. Б. Пиотровский—„История и культура Урарту", Ереван, 1944 г.

բողոտի ձգտումը բացատրելու, թե ինչպես է եղել, որ կիմմերները սկյութացիների հետ հասնելով Մեդացոց աշխարհը՝ այնուհետև երևացին Սինոպի թերակղզու վրա, իսկ սկյութացիք ներխուժեցին Մեդացոց երկիրը։ Սպասելի էր, որ պրոֆ. Ի. Ի. Գիոտրովսկին այս հարցը լուծելիս պիտի հիմնվեր նաև հենց իր բերած եթնագիտական նյութերի վրա։ Խոսելով «Առաջավոր Ասիա թափանցած սկյութացիների մասին» (գլուխ XVI), պրոֆ. Գիոտրովսկին բացառիկ մանրազնին ուշադրությամբ հավաքել է տվյալներ «սկյութական» կոչվող նետածայրերի մասին (երկթև՝ կեռիկը կողքից կամ եռակող), որոնք բնորոշ են Մեծ Կովկասից դեպի հյուսիս ապրող սկյութական և կիմմերական ժողովուրդների հատար և գտնվում են բավականին ընդարձակ տարածության վրա նաև Անդրկովկասում, Հայկական լեռնաշխարհում և հարակից արևմտյան ու հարավային երկրներում։ Կարելի է հաստատ համարել այն, որ նրանք պատկանում էին ներխուժած թշնամի ժողովուրդներին կամ պատրաստվել են տեղում՝ նրանց զենքերի օրինակով։ Այդ նետածայրերի տարածման վայրերով կարելի է նշել ներխուժած հյուսիսային ցեղերի հեղեղի ուղղությունները և ընդարձակությունը։ Գրոֆ. Գիոտրովսկին (էջ 301, 304) ասում է, որ «նրանց (սկյութական տիպի նետածայրերի) երևալը շաղկապված էր կիմմերների և սկյութացիների ներթափանցման հետ Առաջավոր Ասիա 7-րդ դարում»։ Ընդգծելի է, որ այդ նետածայրերը չեն գտնված Կողքիսի և նրանից դեպի հյուսիս՝ Մեծ Կովկասի լեռնաբազուկների միջև բացվող հովիտներում։ Նույնպես այստեղ չեն գտնում ուրիշ հնագիտական իրեր (անոթներ, գարդեր և այլն), որոնց վրա պարզորոշ երևալիս լիներ նրանց հյուսիս-կովկասյան ծագումը կամ այդ օրինակով տեղում շինված լինելը։ Հնագիտական իրերի լեզուն չի խոսում հօգուտ Մերձսևծովյան կիմմերական ճանապարհի. ընդհակառակն, նա ասում է, որ հյուսիսային ցեղերն այդ ճանապարհով չեն փոխադրվել հարավ և չեն թողել այդտեղ իրենց ներթափանցման նյութական հետքեր։

Հօգուտ Սևծովյան, Մեոտիս-Կողքիսյան ճանապարհի չեն խոսում նաև բևեռագրական աղբյուրները, որոնցից մեկը օգտագործում է ակադ. Հ. Մանանդյանը իր կարծիքը հաստատելու համար։ Գրոֆ. Գիոտրովսկին թե այդ մի բևեռագիր աղբյուրն է բերում իր գրքի մեջ և թե բազմաթիվ ուրիշ բևեռագիր վկայություններ՝ կիմմերների ու սկյութացիների ներխուժման ընդհանուր պատկերը, պատմությունը և հեղեղումով ընդգրկված տերիտորիան բազմակողմանի պարզաբանելու համար։

Ակադ. Հ. Մանանդյանը մեջ է բերում ասորական թագավոր Սարգոնին նրա գործակալ Աշուռիսուայի ուղղած նամակից այն բառերը, որտեղ նա խոսելով կիմմերների՝ ուրարտական երկրում երևալու մասին, բացատրում է, որ «Գուրբանիա և Նագնու երկրները գտնվում են Ուրարտուի և Դամիրի մեջտեղ», այսինքն՝ կիմմերները երևացած են եղել այդ երկրների թիկունքում։ Ակադ. Հ. Մանանդյանը չի համաձայնվում Բ. Բ. Գիոտրովսկու, ինչպես և Մեշչանինովի ու Ղափանցյանի այն կարծիքի հետ, որ կիմմերները արդեն 8-րդ դարի վերջերին, Սարգոնի և Աշուռիսուայի օրով տեղավորված են եղել Կապադովկիայում, որը հետագայում հիշվում է Ասորեստանի արձանագրությունների մեջ որպես կիմմերների երկիր և հայերի կողմից նույնպես վերջը կոչվում էր Դամիրք (Մ. Խորենացի)։ Նա սխալ է համարում այդ կարծիքը, հենվելով նույն Մեշչանինովի և Ղափանցյանի

այլ ցուցմունքների վրա, որ ուրարտական արձանագրությունների մեջ հիշատակված «Կուրիանի» երկիրը, որը նույնն է, ինչ որ Աշուռիսուայի նամակի «Գուրիանի»-ն, գտնվել է այժմյան Կարս—Լենինականի կողմերում, ուստի, եզրակացնում է ակադ. Հ. Մանանդյանը, այդ միջոցին կիմմերները, որոնք տեղավորված էին Գուրիանիի «թիկունքում», պետք է նստած լինեին Ուրարտուի հյուսիսում, հավանորեն այժմյան Ախալքալաք—Ախալցխայի մոտակա շրջաններում» (Զավախքում) (էջ 10). իսկ այստեղ նրանք կարող էին մտած լինել Սև ծովի ափով Մեոտիս-Կողքիսյան հին ճանապարհով։ Մի կողմն ևս թողնում այն, թե ինչու կիմմերները, եթե 8-րդ դարի վերջում իրոք նստած են եղել մոտավորապես Զավախքում, պիտի այդտեղ փոխադրված լինեին անպատճառ հյուսիսից՝ Սև ծովի ափով, ոչ այլ կողմով, արևելքից, օրինակ, որ ավելի բնական է, Կուր գետի հովտով, գետի հոսանքով վեր։ Ակադ. Հ. Մանանդյանը ավելի ժանրաղնին քննության չի առել Կուրիանի երկրի տեղագրության խնդիրը և ընդունել է Մեշչանինովի ու Ղափանցյանի ցուցմունքները առանց նրանց սկզբնաղբյուրները քննելու։ Իսկ այս սկզբնաղբյուրները ուրիշ տեղ են դնում Կուրիանի երկիրը, ոչ Կարս—Լենինականի մոտերքում։ Ուրարտական արձանագրությունների մեջ Կուրիանի երկրի մասին երկու անգամ է հիշատակվում, Սարդուր I-ի (755—730) և Ռուսա I-ի (730—714) արձանագրությունների մեջ։ Առաջին անգամ անունը հիշատակվում է ակադ. Հ. Օրբելու պեղումների ժամանակվանում հայտաբերված արձանագրության մեջ, երկրորդ անգամ՝ Քոլաղոանի (Մովինարյան) արձանագրության մեջ։ Առաջինում Սարդուր I-ի 10-րդ տարվա արշավանքն է նկարագրվում դեպի Etiuni երկիրը, ապա նրան ենթակա Eriaxi և Kuriani երկրները, ուրեմն սրանք իրար հարևան երկրներ էին, որոնցից Էտիունի պիտի գտնվել մոտավորապես այնտեղ, որտեղ նրա անունը պատահում է Էլարի արձանագրության մեջ, ըստ Ղափանցյանի՝ «Կոտայքում» (? էջ 164)[1] այս տեղանունով պատահող բոլոր բևեռագրերի մեջ նա տեղադրվում է Զանգու գետի միջին հովտում։ Արշավանքը նրա միջով հասնում է Կուրիանի, ասել է թե վերջին երկիրը պետք է որոնել ոչ թե Կարս—Լենինականի մոտ, այլ ավելի արևելյան կողմերում։ Հեռու չէր և Eriaxi երկիրը—արշավանքն ուղղվել է Լուլուով (Սարդարաբադի գաշտով) Էտիունիով և Էրիախիով դեպի Կուրիանի։[2] Սրանք իրար կից երկրներ էին։ Կուրիանիի տեղի մասին ավելի ճիշտ տեղեկություն է տալիս Ռուսայի արձանագրությունը (Զաղալու), որտեղ այդ անունը հիշատակվում է այլ 23 անունների հետ, այն վայրերի, որ այդ տարին նվաճել է Ռուսա I-ը։ Նրանցից առաջին խմբի մեջ հիշատակված չորսը անվիճելիորեն գտնվում էին Սևանա լճի արևմտյան ափին, երկրորդ խմբի տասնևինը, որոնց անունները համագումարված են առաջին չորսի հետ, կապված են կամ հենց Սևանի ավազանի այլ մասերի, հարավային և արևելյան ափերի, կամ այդ ավազանից դուրս դեպի արևելք, արդեն Փոքր Կովկասից դեպի Կուր գետը նայող լանջերի հետ[3]. վերջինը քիչ է հավանական։ Այդ 19-ի մեջ է նույնպես և Կուրիանի, ուր

[1] Գ. Ղափանցյան, l. c., էջ 181 և 185, նաև Б. Б. Пиотровский. l. c., 77—78. И. И. Мещанинов, l. c., стр. 32.

[2] Б. Б. Пиотровский, l. c. стр 101—102.

Ռուսան մտած է եղել արևմտյան ափերը իրեն հպատակեցնելուց հետո։ Ըստ այս պվյալների՝ Կուրիանի պիտի դեռեղվի Հայաստան լեռնաշխարհի հյուսիս-արևելյան կողմերում, ոչ թե Կարս—Լենինականի մոտ. այն ժամանակ նրանց թիկունքում գտնված Գամիրը, Gamirri «կիմմերների երկիրը» պետք է որոնել ոչ թե Ջավախքում, այլ Շահդաղի շղթայի այս կամ այն կողմերում, գուցե նույնիսկ այժմյան Կիրովաբադի (Գանձակի) մոտակայքում, թեև առհասարակ հավանական չէ, որ ուրարտացիք մտած լինեին Կուր գետի հովիտը։ Եվ իրոք, բոլոր բեռոագրական աղբյուրները հաստատում են, որ Ռուսա I-ի օրով և նրանից դեռ բավականաչափ հետո կիմմերները խսկապես գտնվել են այդ կողմերում, Մեզացոց աշխարհին ավելի մոտիկ վայրերում, և ոչ թե Կապադովկիայում կամ Ջավախքի շրջանում։

Ահա դրա համար ապացույցներ։

Ասորեստանցիք Սարգոն թագավորի ժամանակից շատ լարված հետևում էին կիմմերների առաջխաղացմանը, ոչ միայն այն պատճառով, որ նրանք սպառնում էին Ուրարտական պետությանը և նրան թուլացնում էին, այլև այն պատճառով, որ նրանց երևալը մեծ վտանգ էր սպառնում և իրենց, մանավանդ Մանայում իրենց ունեցած ազդեցությանը։ Իհարկե, նրանք ուրախանում էին, երբ գործակալները հաղորդում էին, որ Ռուսա I-ը մեծ ջարդ է կրել կիմմերների կողմից, նրա զորքը ջախջախվել է, գոլավարներից երեքը սպանվել են, ինքը Ռուսան փախել և պատսպարվել է իր սեփական ելկրում։ Աշուրխուան իր տեղեկություններն ուղարկում էր կամ ինքն անմիջապես Սարգոն թագավորին, կամ դահաժառանգ Սենեքերիմի միջոցով, կապ պահպանելով Մուսասիրի վարիչ Ուրզանայի հետ։ Մուսասիրը գտնվում էր Ուրարտուի արևելյան կողմերում, Մանայի երկրի մոտ. պարզ է, որ Ուրզանայի հաղորդած տեղեկությունները վերաբերում էին հաքեամն գավառներում կատարվող իրադարձություններին, ուրեմն կիմմերները 8-րդ դարի վերջին գտնվում էին Հայկական լեռնաշխարհի հենց այդ հյուսիս-արևելյան կողմերում։ Հաջորդ 50-ամյակի մասին ավելի ճիշտ տեղեկություններ են պահպանվել, որ Սարգոնի թոռ Ասարհադդոնի ժամանակ (680—668) կիմմերները մնում էին դեռ սկյութացիների հետ մեդացիների կողքին Ուրմիո լճի ավազանում։[1] Գերճախոս է մանավանդ ոմն Բելուշեզիրի նամակը Ասարհադդոնին, որտեղ ասված է, թե կիմմերները խոսք են տվել չհարձակվելու մանացոց վրա. «կիմմերներն ասում էին՝ մանայեցիք ձերոնք են, մենք միր ոտները կապել ենք (այսինքն՝ նրանց վրա չենք հարձակվի), իհարկե դա սուտ է։ Արդյոք նրանք չեն չարիքի սերմը։ Նրանք չեն ճանաչում ոչ խոստում, ոչ երդում աստվածների անունով։ Ապա բերվում է ծրագիրը, թե ինչպես պիտի ամրացնել լեռնանցքները կիմմերների ներխուժումների դեմ և դուրս քշել նրանց Մանա երկրից։[2] Այսպիսով՝ կիմմերները դեռ 7-րդ դարի առաջին քառորդում Ուրմիա ավազանում էին և նրա մոտակայքում. միայն ավելի ուշ, Ասարհադդոնի հաջորդ Աշուրբանիպալի զրով, գտնում ենք նրանց տեղափոխված դեպի Կապադովկիա և Փ. Ասիայի արևելյան կողմերը, որտեղ նրանց հետ պայքարի են մտնում լյուդիացիք։ Այս տեղափոխությունը պիտի կատարված լինի 673 թվից առաջ, հավանական է

[1] Б. Б. Пиотровский, l. c., стр. 298.
[2] Б. Б. Пиотровский, l. c., стр. 297.

677 թվին Hubuškia-ի մոտ (Զավի և վերին Տիգրիսի միջև) տեղի ունեցած ճակատամարտից հետո. ջարդված կիմմերները չեն կարողացել նահանջել Մանա դրանից հետո, գուցե մասամբ սկյութացիների, մասամբ էլ ատրբատանցոց ճնշման տակ ե դիմել են դեպի Կապադովկիա, մասամբ էլ ուրարտացոց Ռուսա II-ի աջակցությամբ, որի հետ, որպես ոժանդակ ուժեր, մասնակցել են հետո Շուպրիայի ճակատամարտին (Դիարբեքիրի ե Տուր Արդինի միջև).[1] Այսպիսով, ուրեմն, 8-րդ դարի վերջերից մինչև 7-րդ դարի առաջին քառորդի վերջերը կիմմերներն ապրել են Մանայում ե հարևան երերներում, այսինքն՝ Կուրիանի երկրի «Քիկունքում».

Սակայն կիմմերներն իրենց ամբողջ բազմությամբ, բոլոր ցեղերով անցած չպիտի լինեն այնուհետև Կապադովկիա, ինչպես կարելի է եզրակացնել հետևյալից. Դարեհ Վշտասպյանի օրով (6-րդ դարի վերջերը) նրանք երկու անգամ հիշատակվում են Նախշիռուստեմի և ապա Բեհիստունի եռալեզվյան արձանագրությունների մեջ. Երկու անգամներն էլ նրանք բաբելոնական բնագրի մեջ կոչվում են matu-gi-mi-ri, իսկ պարսկականի մեջ՝ saka (նույն Բեհիստունյան արձանագրության էլամական բնագրի մեջ ša-ak-ka),[2] ասել է թե՝ կիմմերների մյուս անունը կամ կիմմերների մի կարևոր ցեղի անունը եղել է saka— «շակա». Այդ անունով Ուտիքում մի գավառ կոչվում էր Շակաշեն, ըստ Ստրաբոնի՝ Σακασηνή, ըստ Պլինիոսի՝ Sacasani. Ուրեմն—կիմմերներ-սակերը հաստատված են եղել այժմյան Կիրովաբադի (Գանձակի) կողմերում, հենց Կուրիանի երկրի «Քիկունքում».

Ակադ. Հ. Մանանդյանը (էջ 11) հենվում է նույնպես Ստրաբոնի այն խոսքերի վրա (XI. 14, 14), որ Դուրանիացիները (այսինքն՝ Կուրիանի բնակիչները)—γουραανοι ապրում էին «Արմենիայից վերև», ե այդ «վերևը» հասկանում է որպես «Զավախք կամ նրա հարևան հյուսիս-արևմտյան շրջանները», բայց ըստ այդ վկայության՝ դուրանիացիք հարևան էին մեդացիներին ե այդ տեղագրությանը համապատասխանում է ավելի Սևանա լճի ավազանի արևելյան կողմերում, քան թե Կարս—Լենինականի (?) շրջանում գտնվող Կուրիանի գավառին, որը բառի բուն իմաստով գրանվում է «Արմենիայից վերև».

Սր կիմմերական ճանապարհը երբեք անցած չի եղել Սև ծովի ափով, հաստատվում է նաև աշխարհագրական ու ազգագրական բնույթ ունեցող տվյալներով.

Սև ծովի ափին, Ռիոնի գետաբերանից հյուսիս, մանավանդ Արխաղիայից վեր, Մեծ Կովկասից հեռանում են դեպի Սև ծովը արևմտյան ե հարավ-արևմտյան ուղղությամբ բազմաթիվ, իրար սեղմ հպվող լեռնաբազուկներ, որոնք իրենց սեռերով ընդհուպ մոտենում են ծովափին և կտրվում հենց ջրերի գլխին՝ ոչ մի տարածություն չթողնելով ազատ երթևեկության համար. Նրանց մեջ խորացած նեղ հովիտները բացվում են դեպի ծովը շատ փոքրիկ հարթ տարածություններով, որտեղ ծվարել են ծանծաղ հատակ ունեցող անհարմար նավահանգիստներ. Այդ լեռնաբազուկների և հովիտների վրայով մինչև վերջերս էլ դժվար էր փոխադրվել

[1] C. F. Lehmann-Haupt, l. c., s. 397—434. Նրա ասելով կիմմերները կարող էին արևմուտք անցած լինել կամ Դիարբեքիր Մալաթիա—Ծվաղ կամ Էրզրում—Երզնկա—Կամախ հանապարհով, իսկ Էրզրում հասած Դիլիջան—Կարսով կամ Բայազետ—Ալաշկերտով.

[2] Б. Б. Пиотровский, l. c., 365.

նույնիսկ փոքրաքիվ մարդկանցով. Կիմմերական բազմության համար դրանք անանցանելի էին. Ռուսական ինժեներական արվեստը մեծ դժվարություններ հաղթահարելով՝ անցկացրեց այդ ափերով խճուղի և վերջերս միայն նաև երկաթուղի, որի ճանապարհն ու կամուրջները շարունակ ենթարկվում են ողողվելուց քանդվելու վտանգին. Այս ճանապարհով Միհրդատը չհամարձակվեց քիչ քիչ շատ մեծ խմբով անցնել. Նա փախչում էր երեք մարդու ուղեկցությամբ, որոնց մեջ էր նաև նրա մշտական ռազմական ընկեր Հիփսիկրատիա կինը. Ամրոզը 66 65 թվականի ձմեռը նա մնաց Դիոսկուրիայում, խույս տալով ձմեռվա ամիսներին այդ լեռնաբուկների վրայով անցնելուց. Գոժգեսոը հասնելով Փասիսի գետաբերանին և իմանալով, որ Միհրդատը արդեն փոխադրվել է Բոսֆոր՝ հրաժարվեց նրան ծովեզերով հետապնդելուց ըստ Պլուտարքոսի (35,1), որովհետև այդ ճանապարհը ἀπορίας εἶχε μεγάλας—մեծ դժվարություններ ուներ, ըստ Կ. Դիոնի (XXXVII. 11,3,2), որովհետև ցամաքային ճանապարհն անցնում էր բազմաթիվ անծանոթ և ոգևորված ժողովուրդների միջով. իսկ ծովայինն ավելի դժվարին էր նավահանգիստների պակասության պատճառով. Նա, չնայելով իր զորավարների պահանջներին և՝ հոռմից եկած կարգադրություններին, չփորձեց այդ ճանապարհով հալածել փախած Պոնտացի թագավորին. այլ սկսեց որոնել մի այլ ճանապարհ Մեծ Կովկասի վրայով հյուսիս անցափոխվելու համար և դիմեց Ազվանք—Կասպից ծովին մոտենալու և այդ կողմերի ծովեզերով իր զորքերը հյուսիս տանելու. Հաջորդ դարերում ոչ մի անհյուսիսական ժողովուրդ չներխուժեց Անդրկովկաս Սև-ծովյան ճանապարհով. Հոները. օրինակ, անցնում էին միայն Կասպից դռնով, որտեղ նրանց ներխուժումը սկսելուց համար պարսիկները մեծ ջանքերով չինեցին Ճորա պահակի մեծամեծ ամրությունները. Մի այդպիսի արգելք բարբարոս ժողովուրդների ներխուժման առջև նրանք չկանգնեցին Սև ծովի եզերին. չկանգնեցին նաև հոռոմներից իրենց կողքիսյան. պոնտական և առհասարակ փոքրասիական գավառները բարբարոսներից պաշտպանելու համար. Մերձսևծովյան գավառները իրենց աշխարհագրական պայմաններով այնքան էին կարված կուլտուրական հին աշխարհից, որ քրիստոնեությունը դժվար էր տարածվում այնտեղ և մնաց մակերեսային էր. այդ է պատճառը, որ այդ կողմերի բնակիչներն այնպես հեշտ ընդունեցին ավելի պարզ և նախնական գաղափարախոսությունից բխող մահմեդականությունը. Սարբրոնը պատկերում է աքայներին, զյուգերին և հենիոքներին իբրև ծովային ավազակությամբ զբաղվող ժողովուրդներ, որոնք ունեին երբեք. նեգ, թեթև նավակներ, «կամարաներ» καμάρας—և այդ կամարաներից նավատորմ կազմելով հարձակվում էին առևտրական նավերի, կամ որևէ գավառի կամ քաղաքի վրա և. այդպիսով, իշխում էին ծովի վրա (XI, 2, 12). Կոլխերից վեր ապրում էին «փթեյրոփագներ» «օջլակերներ» (ոջլոտ ժողովուրդներ)... Այդ շրջանների բնակիչները մինչև վերջ էլ պահպանեցին իրենց ցեղական անուններից շատերը՝ կերևեաներ—չերկեսներ, սաաններ—սվաններ. Այս տեղերի բնակչության մեջ, օրինակ՝ արխազների և ազիզների մեջ մինչև Հոկտեմբերյան տեղեկությունները մնում էին նախնական առնմագետական կենցաղային կարգեր. Աշխարհը կդադարեցած էր Անդրկովկասում նախկին դարերում կատարված մեծ կուլտուրական շարժումներից.

հետաքրքրական է և այն, որ այս կողմերում չեն պահպանվել հընդեվրոպական ժողովուրդների հետքեր, որոնք, անշուշտ, պիտի մնացած լինեին կիմմերների կամ այլ հնդեվրոպական դաղթականությունների անցնելուց հետո այստեղի խորը և առանձնացած ձորերի խիտ անտառներում։ Մինչդեռ Անդրկովկասի արևելյան կողմերում տեղական բնակչության մեջ ուժեղ հատվածներով ներկայացված են հնուց այստեղ վերաբնակված հնդեվրոպացիք թալիշներ և թաթեր (հին կասպեր և կադուսիներ—Ստրաբոն—XI, 8, 8), Արևմտյան Անդրկովկասում բնակչությունը պահպանում է իր անաղարտ հարեթական բնույթը։

Այսպիսով, ոչ մի հիմք չունենք հասկանալու Հերոդոտի երկրորդ պատմությունը այնպես, ինչպես հասկանում են թե ակադ. Հ. Մանանդյանը և թե պրոֆ. Պիոտրովսկին, և ընդունելու մեծ տարանցիկ մերձսևծովյան ճանապարհի դոյությունը։ Ապա ինչպես բացատրել կիմմերական դաղութի առկայությունը Սինոպի թերակղզու վրա ըստ Հերոդոտի։ Կամ պետք է Լեման-Հաուպտի հետ ընդունենք, որ նրանք Սինոպի կողմերը եկել են Կապադովկիայից, կամ սակավաթիվ խմբերով ծովով, նավերով են այդտեղ փոխադրվել, ինչպես վերջը հայերը Փ. Ասիայից Ղրիմ, կամ որ նրանք ըստ Հերոդոտի հեռացել և բաժանվել են սկյութացիներից Ճանապարհի «մեջտեղից», սակայն այդ «մեջտեղը»—μεσογαία-ն նշել արդեն Կասպից դուռը անցնելուց և Կուր գետի ստորին հոսանքին հասնելուց հետո, որտեղից սկյութացիները դիմել են՞ հարավ, ուղղակի Մեդական աշխարհը առանց ընդհարվելու Ռուսա I-ի ուրարտացիների հետ, իսկ կիմմերները մի մասով հետևել են նրանց, սակայն իրենց բաղմությամբ, «աղդովին» ծովել են, շեղվել են դեպի արևմուտք և Կուր գետի ուղղությամբ առաջանալով հասել Սև ծովի ափերին։ Այդ փոխադրության միջոցին նրանց խոշորագույն հատվածը հեղեղել է և Կապադովկիան, իսկ մի հատվածը՝ «սակերը» մնացել են Արևելյան Անդրկովկասում։

Այսպիսով՝ դժվար է համաձայնել ակադ. Հ. Մանանդյանի այն եզրակացության հետ, որին նա եկել է իր զեկույցի մեջ՝ ասելով, թե վկայությունների ուշադիր քննությունը համոզում է, որ «գլխավորապես Մեոտիս-կողքիսյան Ճանապարհն է ունեցել պատմական կարևոր դեր», որ նա, խաղացել է «ռազմական և առևտրական մեծ դեր հին ժամանակներում» և որ, բացի այդ, նա է «եղել այն գլխավոր կամուրջը, որի վրայով Ուրարտու և Հայաստան են մտել կիմմերական, սկյութական և ավելի ուշ նաև սարմատական ցեղերը։ որոնք ուրարտական պետության անկումից հետո, երկար ժամանակ իշխել են Հայկական բարձրավանդակի հյուսիսային շրջանում»։

Անդրկովկասում և Հայկական լեռնաշխարհի հյուսիսում տեղի ունեցած էթնիկ հեղաշրջումների և կուլտուրական զարդացման ընթացքի վրա վճռական ազդեցություն են ունեցել հյուսիսային ժողովուրդների ներխուժումները Կասպից ծովի ափով, և ոչ թե Սևծովյան ցամաքային ճանապարհի «կամուրջով» կատարված փոխադրությունները։

Ст. Лисицин

Путь вторжения киммеров в Закавказье

(Р е з ю м е)

Не вызывает спора путь проникновения скифов в Закавказье, а именно через Дербентские ворота, вдоль берега Каспийского моря. Разногласие имеется по вопросу о пути вторжения киммеров.

Нельзя считать обоснованным мнение Минса (Cambridge Anc. History) и Леманна-Гаупта Real. Enzyclopadie Pauly-Wissowa), что киммеры проникли через Дариальское и соседние ущелья, так как, по Геродоту, они шли, имея Кавказские горы по правой руке, а, продвигаясь по ущельям, они б имели горы по обе стороны. Акад. Я. А. Манандян в своем докладе на сессии АН Арм. ССР (11 апреля 1944 г.) выступил с утверждением (доклад помещен в сборнике: „О некоторых проблемах древней Армении и Закавказья"), что киммеры двигались по берегу Черного моря и сначала достигли нынешнего Ахалкалакского плоскогорья. К этому выводу, по его словам, он пришел, исходя из показаний Геродота и Страбона, а также одной ассирийской таблицы.

На основании разбора этих и других показаний тех же источников, а также археологических, этнографических и географических, данных, я не могу присоединиться к указанному выводу и веду киммеров по берегу Каспийского моря. По Геродоту (I,103), скифы и преследуемые ими по стопам киммеры вместе достигли Мидийской земли, имея по правую руку Кавказские горы. Это могло быть только вдоль северной подошвы хребта и в обход хребта с востока. Другое показание Геродота (IV, 12), объясняющее, как могли попасть киммеры на полуостров, где „теперь греч. город Синоп", указывает, что скифы „отклонились с полпути" (ἐσμεσόγαιαν τῆς ὁδοῦ γραφθέντες) и направились в Мидию, а киммеры по морскому берегу достигли Синопа. Иначе говоря, это расхождение произошло после совместного вторжения обоих народов в Закавказье, причем киммеры двинулись на запад через все Закавказье и по берегу Черного моря до Синопа, а скифы—на юг, внутрь Мидии.

Академик Я. А. Манандян ведет киммеров по Меотидо-Колхидскому пути, которому он придает значение „великого военного и торгового пути", и пытается наметить стоянки на этом пути, но он упускает показание Страбона (XI, 2,13), по которому,—1. на этом пути, где жили ахаи, зюги и эниохи, нет гаваней, страна гориста, и 2. здесь между стоянками можно продвигаться не сухим путем, а все время пересаживаясь на корабли πλοῦς, и Митридат Евпатор, во время своего бегства из понтийских владений в Крым, был принужден постоянно бросать берег и переходить на корабль. Ниже (XVII,3,24) Страбон, говоря об успешном распространении римского владычества в Азии, указывает, что это владычество не могло установиться в земле ахаев, зюгов и эниохов, где ущелья „бесплодны и население состоит из разбойничьих племен".

И проф. Б. Б. Пиотровский („История и культура Урарту". стр. 301) утверждает, что киммеры проникли в западное Закавказье, где и находилась упоминаемая в ассирийских надписях страна Гамир, между тем как скифы, напротив, известны в восточном Закавказье, откуда продвинулись в страну Мана, южнее оз. Урмийского. Таким образом и Б. Б. Пиотровский для вторжения киммеров намечает причерноморский путь, не учитывая того обстоятельства, что по *археологическим* данным (скифские страны и т. п.) на этом пути нет следов прохождения скифов и преследуемых ими киммеров.

В пользу Черноморского пути не говорят и свидетельства *клинописей*, из которых видно, что киммеры появились в тылу страны Гуриании, которую акад. Я. А. Манандян, следуя толкованию И. И. Мещанинова и Г. Капанцяна, помещает в области Карс—Ленинакана. Таким образом киммеры находились на нынешнем Ахалкалакском плоскогорье (Джавахетия), куда проникли по берегу Черного моря.

Анализ *клинописных* надписей (Сардура I и Русы I) приводит меня к заключению, что Гуриани (или Куруани) следует искать в бассейне Севанского озера или поблизости, в окрестностях Шахдагских гор. Все, что известно из клинописных источников (сведения с большой полнотой мы находим в последней работе Б. Б. Пиотровского: „Ист. и культура Урарту") о месте поселения киммеров, убеждает нас в том, что еще в первой четверти 7-го века они жили в бассейне Урмийского озера, и лишь позже, при Ашурбанипале, мы их находим в западных частях Армянского Нагорья и в Каппадокии, где с ними пришли в столкновение лидийцы. Это перемещение совершилось до 673 г., вероятно, в 677 г., после битвы при Hubuškia. До того они были в „тылу", за страной Куриани, где фигурируют под названием саков (см. надписи Дария Гистаспа), откуда и название области вокруг Кировабада „Сакасена." Здесь они и жили „выше Армении", как указывает Страбон (XI,14,14).

Против черноморского пути вторжения киммеров говорят и *географические* условия. Известно, как вплотную к морю здесь подходят отроги Кавказского хребта, оставляя до того узкую полосу для прохода, что Митридат едва пробирался на север в сопровождении трех спутников. Помпей не решился с войском его преследовать. Позже ни один народ не продвигался с севера по этому пути, и этот путь не приходилось укреплять против такого вторжения, между тем как Каспийские ворота (Дербентские) до последнего времени защищались мощными крепостными сооружениями. На этом пути не застрял ни один из чуждых народов. Сейчас это район, сохранивший свой этнический характер таким, каким он был в эпоху скифско-киммерских перемещений.

Все эти данные не позволяют согласиться с утверждением, что киммеры ворвались в Закавказье по берегу Черного моря и что здесь пролегал важный „торговый и военный путь".